# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՍԱՀԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

## ԱՄԱՆՈՐԻ, ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

### Ամանորի տոնը Մայր Աթոռում

*«Շնորհավոր նոր տարի»— ահա խոսքեր, որ բխում են ամեն մի մարդու բերանից, երբ ամանորի օրը առավոտյան տանից դուրս գալիս, հանդիպում է իր ծանոթներին և բարեկամներին։*

*Դեռ գիշերը, դեկտեմբերի 31-ին, սեղանի շուրջը բարեկամներով շրջապատված, ուղիղ ժամը 12-ին, մարդիկ հրաժեշտ են տալիս հինին և նորի գալուստը շնորհավորում ու բարեմաղթանքներ անում իրար։*

*Անշուշտ, նոր տարվա շեմքին, Մայր Աթոռի միաբանությունն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը չէին կարող նման եղբայրական սեղանի շուրջը չնստել։*

*Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Ճեմարանի հանդիսադահլիճում պատրաստված էր ճոխ սեղան, ուր հավաքվել էին միաբանության անդամները, Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողները և վանքի ծառայողները։ Ռեկտոր Մ. Մինասյանի շնորհավորական խոսքից հետո, ընտրվում է սեղանի կառավարիչը։ Ելույթ են ունենում դասախոսները, միաբանության անդամները և ուսանողները, որոնցից, առանձնապես, աչքի է ընկնում Իգնատիոս սարկավագը իր յումորով գրված «կաղանդչեքներով» ուղղված միաբանության, ուսուցչական կազմին և ուսանողության։*

*Երգը, պարը, խինդն ու ծիծաղը, համադամ պասուց կերակուրները, քաղցրեղենի հետ, ուրախ ու քաղցր տրամադրություն են ստեղծում, որին սրտանց մասնակից են լինում բոլորն անխտիր։*

*Բավական ուշ բոլորը ցրվում են։*

### Կիրակի, հունվարի 1

*Դեռ իրիկվանից արդեն զգացվում էր նոր տարին։ Ժամը 11-ին ղողանջում են Մայր Տաճարի զանգերը։ Ժողովուրդը գալիս է Տաճար նախ՝ իր աղոթքը մատուցանելու Աստծուն, ապա՝ ներկա լինելու իր սիրելի Վեհափառ Հայրապետի համար մատուցվելիք մաղթանքին։*

*Ս. Պատարագը վերջացավ։ Վեհափառ Հայրապետը իր տեղը բռնեց Իջման Սեղանի առաջ։ Ոսկեթել թանկարժեք շուրջառը առած, Հայրապետական գավազանը և ականակուռ ոսկյա խաչը ձեռքին, կանգնած էր ազգի Հովվապետն իր պարթև հասակով, քաղցր ու լուրջ դեմքով։*

*Հանդիսադիրն էր Գերաշնորհ Տեր Վահան Արքեպիսկոպոս Կոստանյանը, որը հայրապետական մաղթանքից հետո, խոսեց հավուր պատշաճի քարոզ և բարեմաղթություններ արեց Վեհափառ Հայրապետի արևշատության համար։*

*«Էջ միածինն ի հօրէ» շարականի երգեցողության ժամանակ սկսեցին ղողանջել Տաճարի զանգերը, որի ժամանակ բոլորի սրտում ու մտքում միայն մի խոսք էր հնչում՝ «Մի՛շտ անշարժ պահեա՛ զաթոռ Հայկազեանն»։*

*Մաղթանքը վերջացավ։ Բոլորը, ծնրադիր, շնորհավորելով Վեհի նոր տարին, համբուրեցին Նրա Ս. Աջը։ Հետո միաբանությունն ուղեկցեց Հայրապետին մինչև Վեհարան, որ-*

տեղ հավաքվեցին նաև Ճեմարանի ուսուց- չական կազմը և այլ հյուրեր։

Վեհը բարեհաճեց սեղանատուն հրավիրել հյուրերին։ Տ. Վահան Արքեպիսկոպոսը ա- ռաջարկեց խմել Վեհի կենացը։ Տ. Նիկողա- յոս ավագ քահանան երգեց «Տէր, կեցո՛ դու զՀայս» մաղթերգը։

Սեղանի կառավարիչ ընտրվեց Տ. Սահակ Ծ. Վարդապետը, որի առաջարկած կենաց բաժակները ընդունվում էին խանդավառու- թյամբ, մանավանդ, երբ նա առաջարկեց խմել Կիլիկիո շնորհազարդ Տ. Տ. Գարեգին Ա. կաթողիկոսի կենացը։ Վեհափառի խրա- տական և եղբայրասիրական խոսքերից հետո, ներ- կա եղողները համբուրելով Նրա Ս. Աջը և մի-մի օրինակ օրացույց ստանալով ցրվեցին, իրենց հետ տանելով Վեհափառի հայրական բարի և քաղցր վերաբերմունքի լավագույն հիշողությունները։

## Հունվարի 5, Ճրագալույց

Դեռ առավոտից ուխտավորները հավաք- վում էին։ Գալիս էին մոտակա և հեռու գյու- ղերից՝ տոնելու Աստվածահայտնության տո- նը։

Ժամը 3-ն է։ Լսվում է զանգահարության ձայնը. դա «աղջամուղջն» է։ Եւ ժողովուրդը մտնում է տաճար։ Իրենց խուցերից դուրս են գալիս վարդապետները՝ պատմական, խոր- հրդավոր սև վեղարներով, և միաբանության այլ անդամները։

Դարձյալ զանգահարություն։ Դասերում կանգնած են միաբանները, սարկավագնե- րը, դպիրները, իսկ ժողովուրդը Իջման սե- ղանը շրջապատած և դասերի հետև սպա- սում է «Օրհնեալ Տեր Մերին»։

Ջահերի և էլեկտրականության լուսավո- րությունը ողողում է տաճարը։ Սրբոց պատ- կերները և Ավագ սեղանը լույսի մեջ փայլ- փլում են։

Սկսվում է ժամերգությունը։ Իրար հետևող «Ողորմեաները» նախադուռն են լինում ժա- մերգության։

Ամենի սիրտը բերկրալի է, ուրախ և զվարթ։ Կրոնական հագուստով կանգնած հավատաց- յալը ուշադրությամբ լսում է ընթերցվածնե- րը, հետևում վարդապետների շարժումներին։ Պատարագիչը Ս. Սեղանի վրա, վարագույրի ետևը, զգեստավորվելիս, իր աղոթքի մրմնջ- ումներն է անում։ Ամեն ինչ պատրաստ է, և բոլորի հայացքը դեպի սեղան ուղղված, սպասում են վարագույրի բացմանը։

Վարագույրի ետևից դուրս են գալիս չորս խորհրդներ ու տիկնիներ, հագած միագույն շամաշապիկները վառած մոմերը և «Դա- նիել» մարգարեի թերթերը ձեռքերին։ Սկսվում է Դանիելի ընթերցանությունը։ Միաբանությունը, հավատացյալներին հոծ բազմության միջից ճանապարհ բացելով ա- վագ դասից, Իջման սեղանի երկու կողմերից գնում է Վեհարան, Վեհին ուղեկցելու դեպի տաճար։

Այժմ երկու շարք, որպես պատնեշ, կանգ- նած է ժողովուրդը։ Ամեն մինը աշխատում է, որքան կարելի է, մոտ լինել այն տեղին, որտեղից պիտի անցնի Վեհափառը, տես- նելու համար այդ պատկառելի ծերունու դեմքը։

Զանգերը ղողանջում են. բոլորը հետ են նա- յում։ Երևում են վարդապետները։ Ահա և Վե- հափառը. Իջման սեղանի առաջ, իր Աթոռի ամպհովանու ներքև է կանգնած Նա։

Բացվում է սեղանի վարագույրը։ Ահա ըո- պե, երբ բոլորի հայացքները ուղղվում են դեպի սեղանը։ Եւ սկսվում է Ս. Պատարագը։ Կարդացվում է ժամամուտը՝ «Աստվածածին անհարսնացեալ»ը։ Առաջին խոսքը, որ Ծննդյան գիշերը ասվում է, այդ գոհաբանա- կան շնորհակալական խոսքն է՝ ուղղված Աս- տուածամորը։

Տաճարը հետզհետե լցվում է ժողովրդով։ Ս. Պատարագը վերջանալու վրա է։ Մարդիկ ամբողջ օրը ծոմ պահելով սպասում են մասու- նակից լինել Ս. Պատարագին և ճաշակվել։

Վեհափառը իջնում է ատյան։

Սկսվում է նախատոնակը։ Քաղցր մեղո- դիայով, բանաստեղծական խոսքերով հորին- ված «Խորհուրդ Մեծին» մասնակցում է ժո- ղովուրդը։

Վերջացավ նաև նախատոնակը։ Վեհը, միաբանների ուղեկցությամբ, գնում է Վեհա- րան։ Բավական ուշ, ժողովուրդը ևս սկսում է ցրվել։ Դուրս գալով Տաճարից, ամենքն ի- րար շնորհավորում են՝ «Շնորհավոր Ծը- նունդ»։

### Հունվարի 6, Աստվածահայտնություն և Ջրօրհնեք.

*Պատարագիչն է Տ. Վահան Արքեպիսկոպոսը։ Դեռ առավոտից ժողովուրդը խռնվում է Տաճար։*

*Հանդիսավոր Պատարագը վերջանալու վրա է։ Բացվում է վարագույրը և սկսում է Ջրօրհնյաց հանդեսը։ Վեհափառը ոտքի է կանգնում։ Պատարագիչ Սրբազանը շրջապատել են վարդապետներ, քահանաներ, սարկավագներ և դպիրներ։*

*Շարականի քաղցր երգեցողության ուղեկցությամբ, բերում են սուրբ Մեռոնի աղավնին։*

*Սրբազան պատարագիչը առնում է Ս. Մեռոնի աղավնին իր ձեռքը և սկսում Ջրօրհնյաց հանդեսը։*

*Այդ րոպեին դասերը մի անընդհատ լցվում են ժողովրդով։*

*Վերջացավ Ջրօրհնյաց հանդեսը։*

*Մի ժամի չափ տևում է ջրաբաժանությունը։ Հավատացյալները, դուրս գալով Տաճարից իրար շնորհավորում են.*

**«Շնորհավոր Ծնունդ և Մկրտություն Քրիստոսի»:**